ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՆՈՒԽԻ ԵՎ ԱՐԵՇ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ 1918-1920թթ.

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ ամենառողբերգական ժամանակաշրջանն է համարվում XIX դարի երկրորդ հիսնամյակը և XX դարի առաջին երկու տասնամյակները, քանզի այդ ընթացքում մշակվեց և իրագործվեց Հայոց ցեղասպանությունը:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին չսահմանափակվեց միայն արևմտահայերի 1915-1916թթ. զանգվածային կոտորածներով ու տեղահանությամբ: Արևմտահայությանը բնաջնջելու քաղաքականությունը շարունակվեց իրականացվել նաև արևելահայերի նկատմամբ, 1918-1920թթ.: Այդ ժամանակահատվածում Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի կողմից կոտորածի ու տեղահանության ենթարկվեց նաև Ելիզավետպոլի նահանգի Կուր գետի ձախափնյակում գտնվող Նուխի և Արեշ գավառների տեղաբնիկ հայությունը: Այդ գավառներում իրականացված հայերի ջարդը, տեղահանությունն ու գաղթահայության կրած տառապանքներն ամենառողբերգական էջերից են հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության մեջ, ողբերգական՝ թե՛ իրենց ծավալներով, թե՛ հետևանքներով: Տասնամյակներ ի վեր լռության էր մատնված հայության այդ հատվածի կոտորածների պատմությունը, քանզի բոլշևիկյան գաղափարախոսության մենատիրության պայմաններում արգելված էր խոսել Ադրբեջանում հայերի ցեղասպանության մասին:

Երկու գավառների 53 հայկական գյուղերում նախքան կոտորածները հայ բնակչության թիվն անցնում էր 50 հազարից:[1] 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում տիրող քաղաքական անկայուն իրավիճակից, Անդրկովկասում է՛լ ավելի ծավալեց համաթուրքականության (պանթուրքիզմ) քարոզչությունը:[2] Անդրկովկասում համաթուրքական քարոզչության նպատակով դեռևս 1913թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը Բաքվում, Թիֆլիսում և Նուխիում ստեղծել էր կուսակցական տեղական կոմիտեներ:[3] Երիտթուրքերի հենարանը Արդրկովկասում «Մուսավաթ» կուսակցությունն էր, որը ջանք չէր խնայում արագացնել թուրքական ներխուժումը Անդրկովկաս:[4] Կովկասյան թաթարների միահամուռ հակում-

ները դեպի Թուրքիան բացահայտ բնույթ էին կրում:

Զենք ձեռք բերելու, թուրքերի առաջխաղացումն արագացնելու և թիկունքում անիշխանություն ստեղծելու նպատակով թաթարների առաջին քայլերից մեկը ռազմաճակատներից վերադարձող ռուս զինվորական գնացքների վրա կատարվող ավազակային հարձակումներն էին: Այդ գործողությունները ղեկավարում էր Ելիզավետպոլում այդ օրերին իր գործունեությունը սկսած՝ Մուսուլմանական հասարակական կոմիտեն:[5] Անդրկովկասի թաթարներին զինելու ուղղությամբ մեծ աշխատանք էին կատարում Թուրքիան և Գերմանիան՝ զենք գնելու նպատակով մեծ գումարներ ուղարկելով Անդրկովկաս:[6] Ըստ գեներալ Կուլերյակինի՝ Ելիզավետպոլի նահանգում համարյա ամբողջ մահմեդականությունը զինված էր:[7]

Անդրկովկասում և, մասնավորապես, Նուխի, Արեշ գավառներում համաթուրքականության քարոզչության ծավալման, միաժամանակ՝ մուսավաթի վարած հակահայ քաղաքականության հետևանքով թաթարների տրամադրվածությունը հայ բնակչության նկատմամբ կտրուկ փոխվեց: Օգտվելով այն իրավիճակից, որ Առաջին աշխարհամարտի սկզբից Նուխի-Արեշի հայ երիտասարդությունը զանգվածաբար զորակոչվել էր գործող բանակ, և գյուղերում մնացել էին բացառապես կանայք, ծերունիներ ու երեխաներ, թաթարների ավազակախմբերը նպատակադրվեցին հարձակվել անպաշտպան մնացած հայկական գյուղերի վրա: Ոգեշնչված թուրք էմիսարների հակահայկական կոչերով՝ թաթարները 1917թ. հոկտեմբերից սկսեցին անարգել սպանել և կողոպտել Նուխի-Արեշի՝ մահմեդական գյուղերով շրջապատված Ջաֆարաբադ, Օթմանլու, Չոլախլու, Ջուջամիշ, Վարդանլու, Հավարիկ և հայկական մյուս գյուղերի անզեն բնակչությանը:[8] Թաթարների բարբարոսությունների հետևանքով երկու գավառներում 1917թ. հոկտեմբերից մինչև 1918թ. մայիսն ավերվեց 16 հայկական գյուղ, տեղահան եղան 6252 հայ:[9]

Հաշվի առնելով ստեղծված վտանգավոր իրավիճակը, գավառներում ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Բաքվի Հայոց ազգային խորհրդի, Հայոց ազգային կենտրոնական խորհրդի, Թիֆլիսում գործող Նուխի-Արեշի հայրենակցական ժամանակավոր կոմիտեի (նախագահ՝ Ս. Շիյան) և Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանի ջանքերով Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատներից Թիֆլիս վերադարձած նուխեցի և արեշցի 700 զինվորներից հայկական կորպուսի կազմում ձևավորվեց Նուխիի առանձին հրաձգային 4-րդ գումարտակը:[10] Սկզբնական շրջանում գումարտակի հրամանատարն էր գնդապետ Ա. Հովսեփյանը[11], որին հետագայում փոխարինեց գնդապետ Ի. Բրեդիսը:[12] Սակայն գումարտակը ոչ ճիշտ ընտրված ղեկավարության և կարգապահության թուլացման պատճառով իր վրա դրված խնդիրը չկարողացավ կատարել: Ստեղծվեց ինքնապաշտպանական միասնական ճակատ, որի պատճառով հայկական գյուղերը հետագայում ևս ենթարկվեցին կոտորածների:

Հայահալած քաղաքականությունը գավառներում զանգվածային բնույթ ստացավ 1918թ. մայիսից, երբ թուրքական զորքերը, վերագրավելով Արևմտյան Հայաստանը, արշավեցին Անդրկովկաս: Այդ արշավանքով փորձ էր արվում իրականացնել համաթուրքականության ծրագրով նախատեսված Օղուզական պետության ստեղծումը, որը պետք է ընդգրկեր Թուր-

քիան, Աղրբեջանը, Պարսկական Ատրպատականը և Թուրքմենստանը:[13] Օղուզական պետության ստեղծման առաջին քայլը՝ Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում Թուրքական նոր պետության՝ «Մեծ Աղրբեջան»-ի ստեղծումն էր, որը պետք է կամրջեր Թուրքիային՝ Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ:[14] Այդ ծրագիրը պետք է իրականացվեր արևելահայության կոտորածների, բռնի մահմեդականացման ու տեղահանության ճանապարհով:

Անդրկովկաս արշավող թուրքական զորքերն, անհաջողություն կրելով մայիսյան հերոսամարտերում, արշավեցին Բաքու: Մայիսի վերջերին թուրքական երկրորդ զորախումբը Նուրի փաշայի գլխավորությամբ արդեն գտնվում էր Գանձակում, ուր այդ օրերին թուրքական հրամանատարության և Գանձակում եղող Աղրբեջանի նորաստեղծ կառավարության ու «Մուսավաթ» կուսակցության գործիչների գաղտնի խորհրդակցությունում վերջնականապես մշակվեցին Կուր գետի ձախափնյակի՝ Նուխիի, Արեշի, Գյոկչայի, Շամախու և Բաքվի հայերի կոտորածների ծրագրերը:[15] Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Աղրբեջանի ներքին գործոց նախարար Բ. Ջիվանշիրի ահաբեկիչ Մ. Թոռլաքյանի՝ 1921թ. հոկտեմբերին կայացած դատավարության ընթացքում Գր. Ամիրյանը հրապարակեց կոտորածներից առաջ Ջիվանշիրի կողմից Նուխիի, Արեշի, Շամախու և Բաքվի քաղաքապետերին տրված գաղտնի հրամանը, որտեղ ասված էր. «Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակների վրայեն անցնելու մեր նպատակներուն հասնելու համար: Մի խնայեք ոչ ոքի և հավատարմորեն կատարեցեք ձեզի տրված հրահանգները»:[16] Ուշագրավն այս փաստաթղթում այն է, որ հայ բնակչությանը կոտորելու մուսավաթ ղեկավարի հրահանգը հար և նման է 1915-1916թթ. արևմտահայերի կոտորածների ժամանակ Թալեաթի, Էնվերի և երիտթուրքական մյուս ղեկավարների հրահանգներին: Եթե Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջումն իրականացնում էին «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի (հատուկ կազմակերպություն) հրոսակախմբերը, ապա Նուխիում և Արեշում այդ նպատակով գործում էր «Ջալլադ կոմիտասի» (դահիճների կոմիտե) կազմակերպությունը:[17] Դրանով իսկ մեկ անգամ ևս փաստվում է այն իրողությունը, որ արևելահայերի 1918-1920թթ. կոտորածների ժամանակ երիտթուրքերի, հետագայում նաև քեմալականների ու մուսավաթականների միջև գոյություն ուներ գաղափարական և գործնական սերտ համագործակցություն:

Թուրքական հրամանատարությունը, կանխազգալով, որ նախքան կոտորածները Նուխի-Արեշի հայ բնակչությունը կարող է գաղթել ապահով վայրեր, Նազիմ փաշայի միջոցով հրապարակեց կոչ՝ ուղղված վերոհիշյալ գավառների հայերին, որում, մասնավորապես, ասվում էր. «...առանց տեղներից շարժվելու [հայերը] աներկյուղ սրտով իրենց սովորական գործերովը զբաղվին, որ Օսմանյան բանակը խաղաղ ազգաբնակչությանը ձեռք տալու նպատակ ու ցանկություն չունի»:[18] Պատմությունը կրկնվում էր: Այսպես կոչված խաղաղասիրական կոչերով թուրքական կառավարությունը հանդես էր գալիս նաև 1915թ., նախքան արևմտահայության կոտորածները, և ցավալին այն էր, որ դրանից հետո էլ արևելահայերի մի մասը դեռևս հավատում էր թուրքերի կեղծ խոստումներին: Թուրքական զորաջոկատները, նրանց միացած տեղի թաթարական ավազակախմբերը 1918թ. հունիսի 5-ին գրավելով Նուխի քաղաքը նենգորեն զինաթափ արեցին քաղաքի հայ բնակչությանը, իսկ հունիսի 13-ին վայրենաբար կոտորեցին

հայերին, կողոպտելով ու այրելով նրանց պատկանող տները:[19] Թուրք-թաթարական բարբարոսությունները շարունակվեցին նաև Միրզաբեկլու, Այդին-Բուլաղ, Աղփիլաքյան, Չարդաք, Սաբաթլու և այլ գյուղերում:[20]

Բաքվի ինքնապաշտպանությունը վճռորոշ նշանակություն ուներ ինչպես Նուխի, Արեշ, Գյոկչա և Շամախի գավառների, այնպես էլ Բաքվի հայության հետագա ճակատագրում: Սակայն հունիսի 27-30-ը Գյոկչա քաղաքի մոտ տեղի ունեցած ծանր մարտերից հետո, Բաքվի կոմունայի զինված ուժերը, որոնք հիմնականում կազմված էին հայ սպաներից ու զինվորներից, բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների և թուրքական զորքի հակահարձակման պատճառով նահանջեցին, ինչը բացասաբար անդրադարձավ հետագա ռազմական գործողությունների վրա, և ձախողվեց ինքնապաշտպանական ծրագիրը:[21] Գյոկչայից Բաքվի զորքի նահանջն առիթ տվեց թուրք-թաթարների նորանոր բարբարոսությունների: Թուրքական զորաջոկատները, նրանց միացած թաթարական ավազակախմբերը, օգտվելով հայկական գյուղերի ինքնապաշտպանական միասնական ճակատի բացակայությունից, հուլիսի 1-ից աննկարագրելի կոտորածի ու տեղահանության ենթարկեցին Ամիրվան, Գիրդաղյուլ, Ծիրիկ, Թոսիկ, Բլեղ, Ալյար, Չարդաք, Ջորլու, Ջուջամիշ, Օրաբան, Նիժ և հայկական մյուս գյուղերի հայությանը:[22]

Օրհասական այդ օրերին հայկական մի շարք գյուղեր դիմեցին ինքնապաշտպանության: Հիշարժան են Ղայաբաշի, Ղոզլու և Գյոկչա գավառի Վանք գյուղերի (Վանքի ինքնապաշտպանների թվում էին նաև Արեշի գավառի Միրթ-Ենգիջա, Ջորլու, Բլեղ, Ծիրիկ, Թոսիկ և Բեգլարաշեն գյուղերի հայերը) ինքնապաշտպանական մարտերը: Ղայաբաշի գյուղը պաշարված վիճակում մեծաքանակ թշնամու դեմ ինքնապաշտպանական մարտեր էր մղում դեռևս հունիսի կեսերից և հանձնվեց Նուխիի գումարտակի հրամանատար գնդապետ Բրեղիսի դավաճանական փախուստի և ուժերի թուլացման պատճառով: Թուրքերը, մտնելով գյուղ, անխնա կոտորեցին հայերին և հրդեհեցին գյուղը:[23] Կոտորածները զարհուրելի էին, մասնավորապես, Յաղուբլի գյուղում, ուր թուրք-թաթարները գազանաբար այրեցին 600 հայի:[24] Փրկված հայերը, գավառների ընդհանուր կոմիսար Գ. Տեր-Գրիգորյանի գլխավորությամբ, անցնելով Ալազան գետը, գաղթեցին Վրաստանի՝ Աղբրեջանին սահմանակից Սղնախի գավառ՝ ճանապարհին սրածվելով թուրք-թաթարական ավազակախմբերի կողմից: Միայն Ալազան գետն անցնելիս խեղդվեցին 700 կին և երեխա:[25]

Սղնախի գավառում գաղթականներից 5000-ը տեղավորվեցին Յարսկիե-Կոլոդցիում, 3000-ը՝ Սվեչինո, 5000-ը՝ Վերին Կեղի և 10000-ը՝ Ներքին Կեղի գյուղերում:[26] Թուրքական զորքերը, ամբողջովին գրավելով գավառները, բարբարոսաբար սկսեցին ավերել և կողոպտել հազարամյակների պատմություն ունեցող հայկական գյուղերը, եկեղեցիներն ու պատմա-ճարտարապետական հուշարձանները: Կոտորածներն ու բռնությունները շարունակվեցին նաև օգոստոսին: Միայն Ղայաբաշի գյուղում կոտորածի ենթարկվեցին 120 երիտասարդ:[27]

Օրհասական օրեր էին ապրում նաև Սղնախի գավառում տեղավորված գաղթականները, որոնք, զրկված լինելով ապրուստի և սանիտարական տարրական միջոցներից, տարափոխիկ հիվանդությունների պատճառով ունեցան մեծաթիվ կորուստներ: Ավելին, վրացական կառավարությունը գաղթահայության նկատմամբ վարելով անհանդուրժողական քա-

դաքականություն, հակառակ Վրաստանում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և հայ հասարակական ու քաղաքական կազմակերպությունների խնդրանքներին՝ որոշեց գավառը դատարկել գաղթականներից:[28] Օգոստոսի 4-ին վրաց պահակազինվորները գավառային կոմիսար Տկմալաձեի ղեկավարությամբ գաղթահայությանը բռնությամբ տեղափոխեցին Ալազանի ափ, ուր նրանք կրկին ենթարկվեցին թուրք-թաթարների ավազակային հարձակումներին, տալով մեծաթիվ կորուստներ:[29] Շուրջ երկու ամիս Սղնախի գավառում և Ալազանի հովտում տարափոխիկ հիվանդությունների և թուրք-թաթարների ավազակային հարձակումների հետևանքով անթիվ զոհեր տալուց հետո, Նուրի փաշայի թույլտվությամբ սեպտեմբերի սկզբներին 10000-ի հասնող գաղթականներին տեղափոխեցին Նուխի-Արեշ:[30] Թեև Նուրի փաշան «խոստումներ» և «երաշխիքներ» էր տվել՝ գավառներում գաղթականների կյանքն ու գույքն ապահովելու մասին, այդուհանդերձ նրանց կրկին ենթարկեցին կոտորածի, որն ավելի զարհուրելի ձևերով իրականացվեց սեպտեմբերի 15-ին Բաքուն գրավելուց հետո:[31] Թուրք-թաթարների վայրագությունները շարունակվեցին հունիս-հուլիսյան կոտորածներից մասամբ փրկված Նիժ, Վարդաշեն, Ճալեթ, Ծիրիկ, Թոսիկ, Մեծ և Փոքր Սոկութլու գյուղերում:[32] Նուխի-Արեշի հոգևոր վարչության վիճակագրության համաձայն 1918թ. հունիս-սեպտեմբերյան կոտորածներից հետո 50192 հայերից մնացել էին 15373-ը:[33]

Գավառների հայերի զողգոթան դրանով չավարտվեց: Պատերազմում Թուրքիայի պարտությունից և թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց հետո, Ադրբեջանական իշխանությունները, առաջնորդվելով երիտթուրքերին փոխարինած քեմալականների հայաջինջ ծրագրերով և «Ադրբեջանը՝ ադրբեջանցիներին» կարգախոսով, 1919-1920թթ. գավառներում շարունակեցին հալածանքների, կոտորածների և բռնի մահմեդականացման քաղաքականությունը՝ հայկական դատարկված գյուղերը վերաբնակեցնելով թաթարներով և լեզգիներով:[34]

Հայաստանի հանրապետության կառավարությունը, մտահոգված գավառներում մնացած հայերի հետագա ճակատագրով, 1919թ. հունիսի 24-ին որոշեց՝ նրանց տեղափոխել Հայաստանի Հանրապետություն և բնակեցնել Էջմիածնի, Սուրմալուի և Արարատի շրջաններում:[35] 1919թ. օգոստոսից 1920թ. հունվարը ներգաղթեցին 3255 հոգի:[36]

Տակավին շարունակվում էր ներգաղթը Հայաստանի Հանրապետություն, երբ Ադրբեջանի կառավարության թողտվությամբ 1920թ. մարտ-ապրիլ ամիսներին Նիժ, Վարդաշեն և Ճալեթ գյուղերում կազմակերպվեցին նոր կոտորածներ, որոնց զոհ գնացին շուրջ 500 հայ և ուտի:[37]

1918-1920թթ. մղծավանջից հետո Սուրմալուի գավառում հաստատված գաղթականությունը, որն արդեն անցել էր խաղաղ և ստեղծագործ աշխատանքի, 1920թ. սեպտեմբերին թուրքական զորքերի հարձակման և Սուրմալուի գավառը գրավելու պատճառով տեղահան եղավ և խուճապահար գաղթեց Հայաստանի հանրապետության տարբեր վայրեր:[38] Գաղթականների մի մասը հաստատվեց Երևան քաղաքում, հիմնելով Նոր-Արեշ և Վարդաշեն թաղամասերը:

Այսպիսով, 1918-1920թթ. Նուխի և Արեշ գավառներում կողոպտվեցին և ավերվեցին 53 հայկական գյուղ, 50000-ից ավել հայերից զոհ գնացին շուրջ 40000-ը: Քարուքանդ արվեցին տասնյակ եկեղեցիներ, դպրոց-

ներ, ավերվեցին պատմամշակութային մեծարժեք հուշարձաններ: Նյութական կորուստները հարյուրավոր միլիոնների էին հասնում:[39]

Նուխի և Արեշ գավառներում 1918-1920թթ. Թուրքիայի և Ադրբեջանի կիրառած նման քաղաքականությունը հարկ է դիտել որպես 1915-1916թթ. արևմտահայերի ցեղասպանության շարունակություն, քանզի Հայոց ցեղասպանությունը, որպես քաղաքական հիմնահարց, թե՛ իր աշխարհագրական ընդգրկմամբ (Բաքվից, Նուխի-Արեշից, Լեռնային Ղարաբաղից մինչև Կիլիկիա) և թե՛ պատմական իմաստով պետք է դիտել որպես համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք:

Նուխի և Արեշ գավառներում Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականությունը շարունակվեց նաև խորհրդային իշխանության տարիներին, իսկ 1988-1989թթ. բռնագաղթի հետևանքով վերջնակետ դրվեց այդ շրջանների հայերի մաքառումներով ու հերոսապատումներով լի պատմությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 245, g. 1, գ. 8, թ. 55:
[2] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, g. 1, գ. 29, թ. 3:
[3] Մարգայան Ե. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1918թ., Երևան, 1964, էջ 105:
[4] Ավետիսյան Հ. Երիտասարդ թուրքերի և մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայկական ոճրագործությունները 1918թ., ՊԲՀ, Երևան, 1991, թիվ 1, էջ 47:
[5] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, g. 2, գ. 94, թ. 96:
[6] Ավետիսյան Հ. Հայոց ազգային միասնության հաղթանակը (1918 թվականի մայիս), Երևան, 1988, էջ 43:
[7] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, g. 1, գ. 26, թ. 18:
[8] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, g. 1, գ. 12, թ. 1, նաև ֆ. 224, g. 1, գ. 24, թ. 19:
[9] «Աշխատավոր», մայիսի 21, 1918, թիվ 49, նաև «Մշակ», մայիսի 17, 1918, թիվ 86:
[10] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, g. 1, գ. 24, թ. 20, նաև ֆ. 245, g. 1, գ. 3, թ. 11, 24:
[11] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, g. 1, գ. 24, թ. 1:
[12] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, g. 1, գ. 3, թ. 3:
[13] Зареванд. Турция и Пантуранизм, Париж, 1930, стр. 92.
[14] «Հորիզոն», հոկտեմբերի 30, 1918, թիվ 222:
[15] «Աշխատավոր», մարտի 29, 1919, թիվ 61:
[16] Ավո, Միսակ Թռուլաքյան. Յեղափոխական ալպոմ (Ազատագրական պայքարի յուշամատյան), Բեյրութ, 1970, հ. 8, թիվ 1-2, էջ 84-85:
[17] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, g. 1, գ. 12, թ. 7:
[18] Գեղամյան Ե. Տաճիկները Կովկասում և Պագուի անկումը, պր. 2, Պագու, 1919, էջ 136:
[19] «Հորիզոն», հունիսի 20, 1918, թիվ 119, նաև հունիսի 27, թիվ 125:
[20] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, g. 1, գ. 60, թ. 82-106:
[21] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, g. 2, գ. 94, թ. 5-6, նաև «Արև», հունիսի 21, 1918, թիվ 117:
[22] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, g. 1, գ. 5, թ. 10, նաև ֆ. 221, g. 1, գ. 84, թ. 49:
[23] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, g. 1, գ. 250, թ. 2, նաև ֆ. 278, g. 1, գ. 8, թ. 45, նաև «Հորիզոն», հուլիսի 13, 1918, թիվ 137:
[24] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, g. 1, գ. 250, թ. 2, նաև գ. 354,թ. 13-14, նաև «Հորիզոն», սեպ-

տեմբերի 18, 1918, թիվ 188:

[25] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 1, նաև «Հորիզոն», հուլիսի 10, 1918, թիվ 134:

[26] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 8, թ. 86:

[27] «Հորիզոն», սեպտեմբերի 18, 1918, թիվ 188:

[28] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 1:

[29] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 55, թ. 7-8, գ. 13, թ. 213, գ. 14, թ. 50-55:

[30] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 1, նաև ֆ. 276, ց. 1, գ. 14, թ. 64:

[31] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 13, թ. 24, նաև «Հորիզոն», սեպտեմբերի 23, 1918, թիվ 192:

[32] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 329, թ. 54:

[33] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 2:

[34] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 14, թ. 12, նաև "Наше время", 15 апреля, 1920, N 20:

[35] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 71, նաև ֆ. 202, ց. 1, գ. 597, թ. 39:

[36] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 7, թ. 21-24, նաև ֆ. 205, ց. 1, գ. 599, թ. 12-17:

[37] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 7, թ. 9, նաև "Наше время", 18 апреля, 1920, N 20:

[38] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 51, 64:

[39] Կարապետյան Մ. Հովհ. Թումանյանը Հայկական կոտորածի մասին, ՊԲՀ, Երևան, 1987, թիվ 2, էջ 244:

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՒՐ ԳԵՏԻ ՄԻՋԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿՈՒՄ
1914 Թ.
1 - 100
100 - 400
400 - 1000
1000 - 2500
2500 - 4000
4000


ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՒՐ ԳԵՏԻ ՄԻՋԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿՈՒՄ
1988 Թ.
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
1 - 100 մարդ
100 - 400 մարդ
400 - 1000 մարդ
1000 - 2500 մարդ
2500 - 4000 մարդ

Резюме

Погромы армян и их самооборона
в Нухинском и Арешском уездах в 1918 и 1920гг.

Геворг Степанян

В Закавказье, особенно в прибрежных районах реки Куры, погромы армян носили неслучайный характер. Этим путем младотурки хотели осуществить одну из задач пантюркистской программы – под протекторатом Турции создать "Великий Азербайджан". Резня армян Нухинского и Арешского уездов была продолжением политики Геноцида западных армян 1915-1916гг.

С июня 1918г. турецкие войска совершили поход в Баку, и погромы стали носить массовый характер. Самооборона Баку, которая осуществлялась в основном армянскими силами, имела определяющее значение для христианского населения как Бакинской, так и Елизаветпольской губерний. Однако осуществить задачу самообороны нухинским и арешским армянам полностью не удалось. В июне-сентябре 1918г. в Нухе и Ареше были организованы новые погромы. Политика истребления армян была продолжена в 1919-1920гг. мусаватистами.

В период 1918-1920гг. в результате погромов армян Нухи и Ареша было разорено 53 армянских селения, полностью разграблено их имущество, уничтожено множество памятников армянской культуры. Опустошенные деревни заселялись лезгинами и татарами. Из более 50000 армян жертвами стали 40000.

Summary

The Massacres of Armenians in Noukhi and Aresh Regions
and their Self-Defence in 1918 and 1920.

Gevorg Stepanyan

In Undercaucasus, especially near Koura riverside, the character of massacres of Armenians was not by chance. The young tourkish wanted to carry out one of problem their Panturkish program - by violence and under the protection of Turkey to create "The Great Azerbaijan".

Sloughter of Armenians in Noukhi and Aresh regions was a continuation of the Genocide politics of West Armenians in 1915-1916.

In June of 1918 when Turkish Army made a campaign to Baku and to massacres Armenians had already general character, self-defence of Baku which was carried out in general by Armenian force had determinative meaning both for Christian inhabitants of Baku and Yelisavetpol provinces too. However Noukhi and Aresh Armenians they couldn't carry into effect the task of self-defence. During June-September of 1918 there were organized new massacres. The politics of extermination of Armenians was continued in 1919-1920 by mausavatist.

During the period of 1918-1920 on the results of massacres of Armenians in Noukhi and Aresh 53 Armenian villages were destroyed, plundered and ravages, a lot of monuments of Armenian culture were ruined, and devastated villages were settled by lezgins and tatars. There were 50000 Armenians and 40000 of them became victims.